«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

14 հոկտեմբերի, 2021թ. N 58 -Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 51-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.4 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021 թվականի հուլիսի 23-ի N 51-Լ որոշման հավելվածով հաստատված Կարգի 2.1.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.1.4 Պարզեցված կարգով որակավորում ստանալու նպատակով դիմած անձը սույն կարգի 2.1.1 կամ 2.1.2 կետերով նախատեսված յուրաքանչյուր առարկայի քննությունից ազատման համար վճարում է 10,000 (տասը հազար) դրամ: Ազատում(ներ) ստանալուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում քննություն(ներ)ից ազատման(ազատումների) համար վճար(ներ)ը վճարված չլինելու դեպքում Որակավորման հանձնաժողովի՝ ազատման վերաբերյալ որոշումը համարվում է անվավեր»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**